

Լա՛ւ, ուսկից էր այդ համոզումը, եթէ ոչ հրէական զոհերէն, որոնք նոյնպէս սահմանուած էին մատուցողաց մեղաց թողութեան (Ղ. եւտ. Գ. եւն) եւ ճաշակողաց ալ սրբութեան (անդ, 2, 27): Եւ ոչ միայն այդ զոհից արդիւնքը, այլ գաղափարն ինքնին կապած էին մեր հարք մատաղին հետ: Տաթեւացին, հայ աւանդութեանց այդ նախանձայոյզ պաշտպանը, կը հաստատէ անկեղծօրէն սոյն ճշմարտութիւնս, ըսելով՝ թէ մատաղը « պատարագ եւ նուէրք է Աստուծոյ, որպէս Աբէլ, Նոյ եւ Աբրահամ մատուցանէին » (Հրց. 657) • եւ մեր գիտենք՝ թէ ի՛նչ էին անոնց մատուցաները: Ուրիշ մը, Որբելեանը, նոյնքան ազգայնամուլ, հայ մատաղը պաշտպանելու համար՝ նոյնպէս նահապետաց ու հին օրինաց աստուածահրաման եւ աստուածահաճոյ զոհերուն կ'ապաւինի եւ անոնց կը յենու բոլոր ուժով (Հկճ. Ժ): Այս գաղափարով էր անշուշտ՝ որ միջին դարու մեր եկեղեցականներէն ոմանք պահոց անգամ լուծիչ չէին համարեր ազապի մսին ճաշակումը: « Են ոմանք ի տգէտ քահանայից, կ'ըսէ Ալաւկայ որդին, որ հրաման տան քառասնապահից ի մատաղոյ մսոյ ճաշակել եւ յայլմէ զատանել » • որուն բնականապէս կը հակառակի ինք,